

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10852

ЗКЮП
4-89

4-89

Պրոկատորներ բոլոր յերկրների, միացելը

1

Թ. ԿՐՈՒՊՆԵՐՆԵՑ

Պ Ա Տ Կ Ո Մ Ն Ե Ր Ը

Յ Ե Վ .

Դ Պ Ր Ո Ց Ը

№ 18

Հրատարակություն Լենինականի Գաղ Լուսարանի.

ՅԿԻՈՂ

4-89

24.05.2013

10852

335-54
4-84

1 DEC 2009

Պրոկտարներ բոլոր յերկրների, ժխացի՞ր

ՅԿԽՈՂ
4-83
4-15

Մ. ԿՐՈՒՊՆԻՆՈՒ

24 SEP 2006

Պ Ա Տ Կ Ո Մ Ն Ե Ր Ը
Յ Ե Վ
Դ Պ Ր Ո Ց Ը

127



151

№ 18.

Հրատարակութիւն Կենինականի Գալ. Կուսածնի.

Այս հրատարակությունը Լենգալյուսբաժինը նվիրում է
Հայաստանի Ս. Խ. Հ. Լենինյան պատկանական կազմա-
կերպության

**ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՈՄՄՈՆԻՏՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՏԻՊԸ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՄԵՋ**



3936-84

Տպարան Լենգալքաղպորժկոմի Տեղական Տնտեսության բաժնի
Լենինական, 1924 թ.

**ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՈՄՄՈՆԻՏՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՏԻՊԸ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՄԵՋ**

Յերեխաների կոմունիստական շարժում—անա մի
նոր գործոն, վոր հանդես է յեկել վերջին տարիներս
պրոլետարական յերեխաների կյանքի մեջ: Ընդամենը մի
տարի, տարի ու կես առաջ ծագելով այդ շարժումը, մի
հուժկու, անսովոր ուժեղ հորձաքնով յուր մեջ է քաշում,
շարժման մեջ դնում յերեխաների նորանոր, ավելի ու ա-
վելի մեծ մասսաներ: Դպրոցի կողքին, վոր մինչև այժմ
յերեխաներին կազմակերպող համարյա միակ գործոնն
էր, յերեվան է գալիս մի նոր կազմակերպություն—պատ-
կանականությունը: Մանկավարժները տեսնում են այդ
ծավալվող շարժումը, նրանցից մի քանիսը նայում են
այդ շարժման վրա անհանգստությունով, վրդովմունքով,
կասկածամտությամբ, մյուսները խնդազին վողջունում
են այդ մատող կազմակերպությունը. բայց թե այս և
թե այն խմբերը հարց են տալիս, թե դպրոցը ինչպիսի փոխ-
հարաբերության մեջ պիտի լինի դեպի այդ ծավալվող
շարժումը: Այդ հարցին պատասխան տալն անհրաժեշտ է
թե դպրոցի և թե յերեխաների կոմունիստական շարժման
համար: Յերեխաների կոմունիստական շարժումը հեղա-
փոխության ծնունդ է: Հեղափոխությունն յուր ծավալման
պրոցեսսի ընթացքում գործի մեջ է քաշում, ներգործա-
կան մասնակցության է կոչում ավելի ու ավելի նոր խա-
վեր: Կնոջ մասսայական մասնակցությունը քաղաքական
կյանքի ու աշխատանքի մեջ, յերիասարկության մաս-
սայական կազմակերպված մասնակցությունը հեղափոխա-

կան կյանքի մեջ— սրանք տհա այդ ծավալման ճանապարհի վրա ետապներ են: Յերեխաների կազմակերպված մասնակցութիւնն հասարակական— քաղաքական կյանքի մեջ— սա եւ այդպիսի ետապներից մեկն է:

Յերեխաների կոմմունիստական շարժումը տարերային կարգով է սկիզբն առնում: Սկզբում Գերմանիայում: Այդ շարժման առաջին քայլերին ահանատես ընկերներն ասում են. «Յերեսուն հազարից ավելի 9-ից մինչև 14 տարեկան հասակի յերեխաներ կազմակերպվում են կոմմունիզմի գրոշակի տակ և պրոլետարիատի մարտական կազմակերպութիւնը մի քանի բնորոշ առանձնահատկութիւններով կրկնելով— լարված կերպով պատրաստվում են դասակարգային ահեղ մենամարտի մոտեցող վայրկյանին. և փոշ միայն պատրաստվում են, այլ և ժամանակ առ ժամանակ ցուցադրական փորձեր են անում: Յերը և ի՛նչպես է առաջ յեկել այդ շարժումը: Դժվար է փորոշել զրա ծագման վայրկյանը: Նա այնպես անսպասելիորեն տարերային կարգով կատարվեց... գրում են գերմանացի ընկերները:»)

Առաջանալով Գերմանիայում՝ այդ շարժումը շատ արագ կերպով դուրս է գալիս յերկրի սահմաններից. Ավստրիան, Չեխիան, Իսպանիան, Հոլլանդիան, Շվեյցարիան, Ամերիկան բռնված են արդեն յերեխաների կոմմունիստական խմբերով և մասնակցում են յերեխաների կոմմունիստական խմբերի միջազգային կոնֆերենցիային 1923 թվին, սեպտեմբերին: Գեարը տարեցտարի, ամսեամիս վարարում է ու հեղեղում, յուր մեջ քաշելով պրոլետարական յերեխաների նորանոր հազարներ, դասելով նրանց յերեխաների կոմմունիստական խմբերի կազմակերպված բանակների մեջ: Մեզ մոտ՝ Սորհրդային Միութիւն մեջ յերեխաների կոմմունիստական շարժումը

*) Эдвин Гернле. «Работы в коммунистических детских группах», издатель ЦККСМУ и жур. «Путь просвещения», Харьков, 1923 г.

1922 թվին է ծագել և այժմ այդ շարժումն յուր մեջ հարյուր հազարից ավելի պրոլետարական յերեխա յե հաշվում: Յուր ծագման առաջին իսկ սրից նա մասսայական բնույթ է ընդունում, սրեցոր աճում և ընդարձակվում է:

Վերոնք են յերեխաների կոմմունիստական շարժման նպատակները, անելիքներն ու միջոցները: Ամենից առաջ դա դաստիարակութիւնն է մի նոր, բուրբուկին այլ կազմակերպութիւնն է: Յերեխաների կոմմունիստական շարժումը պրոլետարական յերեխաների կոմմունիստական, դասակարգային դաստիարակութիւնն է: Վերոնք են այդ դաստիարակութիւնի միջոցները, նրա մեթոդիկան: Նրա միջոցները շատ են, բայց ամենազիջալի կապը, նրա ահալի մասնակցութիւնն է յուր դասակարգի կովի և աշխատանքի մեջ:

Յերեխաների կոմմունիստական խմբերը ամենալճուկան կերպով միանգամ ընդ միշտ հողս են ցնտեցնում դաստիարակութիւնի մեջ քաղաքական չեղորութիւնի ցնորքները: Վճռականորեն ու կտրական կերպով նրանք խորտակում են ընդհանրապես «ազատ մարդկային անձնավորութիւն» դաստիարակութիւնի մշուշապատ իդեալները: Ազատ ի՛նչ բանից, բուրժուազիական իդեոլոգիայի ուղիներին, կրոնական նախապաշարմունքների մածուցիկ փոստայնից, մեղանական ավանդութիւնների ծանր ու դժվարին բեռնից: Այն, յերեխաների կոմմունիստական խմբերը իրանց անգամներին դաստիարակում են այդպիսի ազատութիւնը: Բայց յերեխաների կոմմունիստական շարժմանը յուրաքանչյուր մասնակից անգամ աշխատավորների կոլլեկտիվի մարզված, կարգ ու կանոնին վարժված մի անգամ է: Յերեխաների կոմմունիստական խմբերը և նրանց ազատութիւնը բանիւր դասակարգի շինարարութիւնն է: Նրա պայքարին մասնակցող զիաակից անդամի ազատութիւնն է:

Յերեխաների կոմմունիստական խմբերի աշխատանքի

կոնկրետ բովանդակութիւնը վորոշվում է այն մտավոր կոնկրետ անելիքներով և նպատակներով, վորոնք յերևան են գալիս տվյալ յերկրի, տվյալ դարաշրջանի բանվորական դասակարգի մեջ: Գերմանիայի կոմմունիստական խրմբերը կռիվ են մղում կառավարութեան դեմ: Յերեխաները տարածում են կոմմունիստական կուսակցութեան կոչները, շուքմանը (քաղաքապահը — գուռդովոյը) խլում է նրանցից այդ կոչները, յերեխաները վոստիկանատան մեջ հեռ են պահանջում կոչները: Նրանք հրաժարվում են, չեն ցանկանում յերգել ազգային սրհներգը և իրավունք են պահանջում բանվոր դասակարգի միջազգային հիմնը՝ «Խնտերնացիոնալը» յերգելու: Նրանք իրանք հրաժարվում են և զպրոցում ել բողոքում են կրոնի դասավորութեան դեմ: Նրանք պայքար են մղում բանվորական — պրոլետարական զպրոցի համար: Նրանք կռվում են այն շովինիստ ուսուցչի դեմ, վորը քարոզում է գերմանական ազգի փտոքն ու մեծութիւնը և յուր իղեաները սողգիների միջոցով յուր սաների ուղեղների մեջ է մտցնում: Յերեխաների կոմմունիստական խմբերը «մտրակի դեմ պայքարի շարաթ» են հայտարարում, այդ շարաթը տեղափոխում են մամուլի եջերը, թերթիկներ են ցրում, հասակավորներին ևս իրանց աշխատանքի մեջ են քաշում: Գերմանիայի կոմմունիստական խմբերի յերեխաները սովի տարիները ոռւս յերեխաներին ոգնութիւն են կազմակերպում, հանգանակութիւններ սարքում և այլն:

Յերեխաների զբաղմունքները նկարչութեան, կարտոնաժի և կաղապարումի (лепка) շրջաններում վորոշ նպատակ ու իմաստ են ստանում: Այդ ճանապարհով նրանց շինած իրերը մի քանի ավելորդ մարքաներ են տալիս հոգուտ ոռւս սովյալ յերեխաների Փոնդին:

Գերմանական բանդերում այս բուպեյիս շատ կոմմունիստ բանվորներ տառապում են: Նրանց ընտանիքները, նրանց յերեխաները սուր կարիքի մեջ են: Յերեխաների կոմմունիստական խմբերը ոգնութեան են գալիս այդպի-

սի ընտանիքներին. նրանք կազմակերպում են հանգանակութիւններ, պատգամավորութիւններ են ուղարկում արդարագատութեան մինիստրի մոտ, սոցիալ-դեմոկրատ մինիստրի մոտ և նրանից պատասխան են պահանջում, թե ինչու համար են իրանց հայրերը տառապում բանդերում: Գերմանիայի բանվորական ընտանիքի ծանր նյութական վիճակն այն տեղը հասցրեց, վոր այնտեղ հիմա շատ մեծ չափերով կիրառութեան մեջ է յերեխաների աշխատանքը: Յերեխաների աշխատանքի պաշտպանութեան համար կռիվ մղել, պայքարել յերեխաների բանվորական ուժի շահագործման դեմ-ահա լնդիւրներ, վորոնք իսկույն յերեխաների կոմմունիստական խմբերի անելիքների տեսութեան դաշտի մեջ կարեւորագույն տեղ են գրավում: Յերեխաների կոմմունիստական խմբերը միայն այսպիսի լնդիւրներով և շահերով չեն զբաղվում: Վոչ, նրանք պատրաստվում են և վաղվա համար: «Փողոցներով անցնելիս, յերեխաները իրանց հուշատետրերի մեջ նշանակում են այն շքեղ ու հոյակապ առանձնարանների, տների համարները, վորոնք պատկանում են բուրժուազիային և կողքին հետեւյալ զիտողութիւնն ավերացնում. «պետքական» յերեխաների տօն համար». նրանք այժմ արդեն վորոնում են այնպիսի տներ, վորոնք կարող են գալիք հեղափոխութեան յերեխա զոհերի համար ապաստարաններ դառնալ:*)

Այդպիսով կոմմունիստական խմբերի յերեխաները իրանց աշխատանքները կապելով բանվորական դասակարգի անելիքների հետ՝ իսկական դասակարգային կոմմունիստական դաստիարակութիւն են ստանում: Իրանց առորյա աշխատանքի գործնականի մեջ կոմմունիստական խմբերի յերեխաները իրանց մեջ կրթում, մշակում են բուռն, հաստատուն և

*) Տես Ֆրիդրիխ Լանգեյի հոդվածը «Детское движение и детские группы в Германии» «Путь просвещения»-ի մեջ № 11 — 12, 1923 թիվ.

յերկաթյա մի կամք, վորը ուղղված է մարդ-
կության աշխատավոր և ճնշված մասը ազա-
տելու և վոչնչացնելու ամեն տեսակ անհավա-
սարությունն, ամեն տեսակ բռնությունն:

Այդ աշխատանքի մեթոդներն, իհարկե, տարբեր են և
կախված են յերեխաների հասակից, նրանց հետաքրքրու-
թյունից: Յեթե 8—10 տարեկան յերեխաները շատ բան
յուրացնում են կազմակերպված, նպատակավոր-իմաստա-
վորված խողի պրոցեսսի մեջ, կապակցելով այդ խողի
հետ աշխատանքի մի քանի տեսակները, 12-14 տարե-
կան պատանին արդեն մի փոքր ավելի յե ցանկանում,
քան խողը. նա իսկական կռիվ, իսկական պայքար է վո-
րոնում. ուշադիր և հետախույզ հայացքով նա նայում է
իրան շրջապատող սոցիալ-կենցաղական պայմանների վրա,
դիտում է աշխատանքի պայմանները, հասակավորների
կյանքը, նա ցանկանում է շատ բան իմանալ, նա ցան-
կանում է յուր ամբողջ յեռանդը ոգտագործել աշխատան-
քի մեջ: Գպրոցում նա կռվի է մտնում ազգայնորեն տը-
րամազրված ուսուցչի հետ, նա թերթիկներ ու բրոշյու-
ններ է գրում և տպում, հանգանակություններ է կազմա-
կերպում, նա հավաքում, կազմակերպում է յուր կրտսեր
ընկերներին: Այս է ահա յերեխաների կոմմունիստական
խմբերի գործնականը, նրանց մոտավոր նպատակներն ու
անելիքները Գերմանիայում, Շվեյցիայում, Չեխո-Սլովակիա-
յում, Ամերիկայում, ամենուրեք այն բոլոր յերկրներում,
վորտեղ բանվոր դասակարգը պատրաստվում է վերջին
վճռական պայքարի, վորտեղ նա հավաքում է յուր ուժե-
րը կապիտալի հետ վերջին վճռական մենամարտի համար:

Իսկ մեզ մոտ՝ Խորհրդային Միության մեջ կոմմու-
նիստական շարժումն ինչպիսի նպատակներ, ինչպիսի բո-
վանդակություն ունի: Նա յուր վոտքի տակ հող ունի՝
արդյոք, յուր զարգացման, յուր ծավալման համար ունի՝
նա արդյոք նախադրյալներ, Պատկոմական շարժման գործ-
նականը հողուտ այդ շարժման է խոսում: Յերեխաների

շարժման մասսայական, տարեբային աճումը Խորհրդային
Միության մեջ, յերեխաների ուժեղ հակումը դեպի պատ-
կոմական խմբերը ապացուցել են, վոր այդ շարժումը
կենսունակ է, իրական, վոր նա համապատասխանում է
յերեխաների կաթիքներին: Հեղափոխության խողը շատ
խորը կերպով է ակոսել մեր հասարակականության ար-
տը, նա նոր խավեր ու շերտեր է կյանքի կոչել: Մեր
յերեխաների շարժումն աճում է և զարգանում
միշտ ձգվելով ու գիմելով դեպի հասարակա-
կան քաղաքական կյանքը, միշտ յուր վոտքի
տակ այդ առողջ ձգուման հողն ունենալով:

Յերեխաների կոմմունիստական շարժումը ձևավորում,
ոգտագործում է այդ աճող բնազդները, կազմակերպելով
նրանց յերեխաների ինքնագործունեյության, յերեխանե-
րի ինքնակազմակերպման սկզբունքներով: Բնական է, վոր
Խորհրդային Միության յերեխաների կոմմունիստական
խմբերի մոտավոր նպատակներն ու նրանց աշխատանքի
բովանդակությունը մի փոքր տարբերվում են իրանց ա-
րևմտա-յեվրոպական ընկերների նպատակներից ու աշխա-
տանքի բովանդակությունից: Յեթե Արևմտյան Յեվրոպա-
յի պրոլետարիատը յուր ամբողջ յեռանդը, յուր կամքի
բովանդակ լարվածությունը գործ է դնում նախապատ-
րաստվելու՝ վորպեսզի իշխանությունը յուր ձեռքը ձգի,
ապա Խորհրդային Միությունը այժմ յուր ջանքերի,
յուր ուշադրության գլխավոր մասը դարձնում է նոր հա-
սարակության շինարարական աշխատանքների վրա:

Բայց մեր շինարարությունն էլ պայքար է. Պայքար՝
աշխատավորների վիճակի իրական բարելավման համար,
պայքար այն լոգունքների փաստական իրագործման հա-
մար, վորոնք փարոսի պես շողում են ճնշված մարդկու-
թյան աչքերի առաջ: Յուրաքանչյուր էլեկտրական կայա-
րանի վախճանական ավարտը, այս կամ այն տրամվայի
ճանապարհի կառուցումը, այս կամ այն գործարանի ար-
տադրականության բարձրացումը—մեր հաղթանակներից

մեկն ե: Յուրաքանչյուր նոր բացվող դպրոց, մանկապարտեզ, աղուժը մեր հաղթանակն ե լուսավորութեան ճակատում, տգիտութեան, անկուլտուրականութեան, կոմունիստական հասարակութեան չարամիտ ու յերգվյալ թշնամիների դեմ պայքարելու ճակատում: Մեր շինարարութեանը մեղանից պահանջում ե մեր բոլոր ուժերի մեր բոլոր հնարավորութեանների լարումն: Մեր շինարարութեանն առաջ ե բերում հեղափոխական խանդավառութեան, նա աղբյուր ե գտնում հեղափոխական վոզեվորութեան:

Ձե՛ վոր պատմութեան մեջ առաջին անգամն ե, վոր աշխատավորները իրանք իրանց համար են աշխատում, չե՛ վոր պատմութեան մեջ առաջին անգամն ե, վոր բանվորները պալատներ են կառուցում բանվորների համար:

Բայց մենք դեռ շատ բան պիտի կառուցենք: Մենք աղքատ ենք, մենք մուրացկան ենք, բայց ցանկանում ենք Խորհրդային հանրապետութեանների Միութեանը հարուստ դարձնել: Մենք պետք ե շտապենք, մենք վոչ մի բողե չպիտի իզուր վատենք: Մենք հաղթեցինք, հաղթահարեցինք սովը, կեղտոտութեանը, տիֆը, մենք պետք ե հաղթահարենք անգրագիտութեանը, տեխնիկական հետամնացութեանը, անկազմակերպութեանը, մենք պետք ե հաղթենք, մենք պետք ե նվաճենք մեր Խորհրդային հայրենիքի հսկայական տարածութեանը, մենք պետք ե Խորհրդային հանրապետութեանների Միութեանը գոտեվորենք հարյուրավոր օտգիտ-կայաններով, հազարավոր հեռախոսներով, հարյուր հազարավոր լրագիրներով, գրքերով և պարբերական հրատարակութեաններով: Մենք աշխարհքի մեջ աշխատանքի յեզակի հանրապետութեան օաճվիրաններն ենք: Բայց մենք լարված ու շաղբութեամբ և զգաստ կերպով ականջ ենք դնում մոտեցող համաշխարհային հեղափոխութեան գանդաղ ու ծանր քայլերին: Մենք կայծեր ենք նետում, մենք հեղափոխութեան հրդեհը բոցավառող կրակներ ենք թափում նիրհող Արևելքի վրա: Մենք վոչ մի բողե չենք մոռանում, վոր մենք լոկ մի մասն ենք, աշխատավորների միջազգային

բանակի լոկ մի զորագունդը, վոր հաղթանակները, վոր հաջողութեանները սերտորեն կապված են բոլոր յերկիրների, բոլոր ժողովուրդների բանվոր դասակարգի հաղթանակների հետ: Մենք ամբացնում և հաստատուն ենք դարձնում աշխատանքի մեջ առաջին Խորհրդային հանրապետութեանն առաջավոր դիրքերը, բայց մենք լարված և ակնդետ սպասում ենք նոր յեղբայրական Խորհրդային հանրապետութեանների ոգնութեանը, մենք միմիայն նըրանց հետ միասին կըկարողանանք լիակատար կերպով ավարտել նոր կոմունիստական հասարակութեան շենքի կառուցումը:

Մրանք են անա այն կոնկրետ, շոշափելի խնդիրները, վորոնք դրվում են Խորհրդային Միութեան բանվորական դասակարգի առաջ: Նրանք վորոշ չափով պայմանավորում են նաև յերեխաների կոմունիստական շարժման հերթական խնդիրները: Բոլորովին ակնհայանի յե, վոր այդ խնդիրների բովանդակութեանը, մեծութեանը, ընդարձակութեանը և տեմպը նոր մարդիկ են պահանջում, այլ յեղանակով դաստիարակված, մարդիկ, վորոնք կարողանային իրագործել կյանքի մեջ այդ անելիքը: Ստեղծագործական ներգործականութեան, սովորույթների, կոլեկտիվ աշխատանքի դաստիարակութեանը և վերջապես հեղափոխական տրամադրութեան, հասարակական գիտակցականութեան գաստիարակութեանը — այս բոլորը հանդիսանում են նոր կոմունիստական մանկավարժութեան, գաստիարակութեան անհրաժեշտ տարրերը:

Այդպիսի գաստիարակչական պրորլեմի ուղիղ լուծման հավաստիութեանը — մեզ տալիս ե յերեխաների մասսայական կազմակերպութեանը՝ նրանց ինքնագործունեութեան և կամավորութեան սկզբունքով, ամբողջապես կապված կյանքի հետ, կապված այն աշխատանքի հետ, վոր տարվում ե գործարանների, գավոդների հասարակական կազմակերպութեանների, ինչպես նաև կոմյերխտական ու բանվորական ակումբների մեջ:

Բայց միթե դպրոցն ել յուր հերթին նույնպիսի խնդիրներ և նպատակներ չի դնում մեր առաջ—կընարցնի մեզ ընթերցողը: Միթե Սորհրդային դպրոցը, Սորհրդային մանկավարժությունն ևս չեն ձգտում իրանց կրթական դաստիարակչական աշխատանքը նույնպիսի սկզբունքների, նույնպիսի հիմունքների վրա կառուցանել: Միթե այն նպատակները, վոր դնում ե գպրոցի առաջ Սորհրդային պետությունը, ուրիշ կարող են լինել: Աշխատանք այս խոտովանույզ ու անհանգիստ հարցերին ըստ հնարավորության պատասխան տալ:

1919 թվին մարտ ամսին, կուսակցության 8-րդ համագումարում ընդունված կուսակցության ծրագիրը՝ ձևակերպելով այն խնդիրներն ու անելիքները, վորոնք զբված են Ռուսաստանի կոմմունիստական կուսակցության առաջ, ասում ե, վոր ժողովրդական լուսավորության շրջանում Ռուսաստանի կոմմունիստական կուսակցությունը իրան նպատակ ե դնում 1917 թվի հոկտեմբերյան հեղափոխության սկսած գործը հասցնել յուր ավարտին—գպրոցը բուրժուազիայի դասակարգային տիրապետության գործիք լինելուց զարձնել դասակարգերը վերջնականապես վոչնչացնելու, հասարակությունը կոմմունիստներն վերածնելումի գործիք: Առաջադրված նպատակի իրագործման պրոցեսսը մի ամսի, նույնիսկ մի տարվա գործ չե: Դպրոցը, վոր ծանրացած և հին ավանդություններով, հին դասագրքերով, վոր շատ անգամ դասատվության մեթոդների մեջ մեծ խնդրցիտ յե պահում, դժվարությունը ե կարողանում լուծել այդ խնդիրները: Իրանք աշակերտներն են, սովորող յերիտաստրդությունը, վոր կարող ե զարգացման տեմպը արագացնել, ստեղծելով յուր ինքնագործոն կազմակերպությունը, վորը սերտագին կապված ե կուսակցության, բանվորական դասակարգի հետ, թեվակոխելով դպրոցի հետ կազմակերպված հարաբերությունների շրջանը: Այդ տեմպի արագացումը, դպրոցի շինարարության գործի մեջ աշակերտներին մասնակից դարձնելու անհրա-

ժեշտությունը, հենց նրանց մեջ հասարակական ստեղծագործական ներգործականության դաստիարակությունն ու բարձրացումը չափազանց մեծ կարեւորություն և պատասխանատվություն են ընծայում յերեխաների կոմմունիստական շարժման ծավալմանը:

Իրանց աուորյա աշխատանքների ընթացքում յերեխաների կոմմունիստական խմբերը ստեղծում են կոմմունիստական դաստիարակության մեթոդիկա, սեղափոխելով այն դպրոցի մեջ, հենց դրանով հեղափոխականացնելով դպրոցը, արագացնում են բանվոր դասակարգի՝ դրոցին առաջադրած նպատակների աստիճանական իրագործման պրոցեսսը:

Այսպես ենք վերջում մենք յերեխաների կոմմունիստական շարժման աեղը Սորհրդային հանրապետությունների Միության յերկրներում սոցիալական դաստիարակության սխաեմի մեջ:



3936-84

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿՈՆԿՐԵՏ ԱՆԵ-
ԼԻՔՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒՅՑԱՆ ՄԵՁ

Գերմանիայում յերեխաների կոմունիստական խմբերը պայքար են մղում դպրոցի մեջ, մանկավարժական և քաղաքական հետաքննարկության և ուսուցիչի դեմ և այդ կովի մեջ նրանց ոգնում է բանվորական դասակարգը հանձին յուր առաջատար գնդի՝ կոմունիստական կուսակցութեան: Այնտեղ դպրոցի մեջ կռիվ է տեղի ունենում կառավարչական սիստեմի, կառավարութեան դպրոցական քաղաքականութեան դեմ. յերեխաները առաջ են տանում այդ կռիվը և այդ ճակատը մի փոքրիկ մասն և միայն այն մարտական ընդհանուր ճակատի, վոր բաց է արել բանվոր դասակարգը յուր ազատագրութեան համար պետական ընդհանուր սիստեմի դեմ:

Խորհրդային հանրապետութեաններ Միութեան մեջ այն նպատակներն ու խնդիրները, վոր Խորհրդային իշխանութեանն առաջադրում է դպրոցին, նման են յերեխաների կոմունիստական շարժման նպատակներին և խնդիրներին: Ուստի և մեզ մոտ չկա և չի կարող լինել յերեխաների կոմունիստական խմբերի պայքար դպրոցի մեջ: Այստեղ խոսք կարող է լինել միմիայն յերեխաների կոմունիստական շարժման ու դպրոցի կազմակերպված աշխատակցութեան մասին. դպրոցը յերեխաների կոմունիստական խմբերի ստեղծած կոմունիստական հասարակականութեան ազդեցութեան շրջանի մեջ քաջելու մասին: Հարցի այսպիսի մեջբերումը յերեխաների կոմունիստական շարժմանը պարտավորեցնում է վորոշել յուր կոն-

կրեա անելիքները դպրոցական քաղաքականութեան շրջանում, պարտավորեցնում է դպրոցին համաձայնեցնել յուր աշխատանքը այդ անելիքների և խնդիրների հետ, մեջ տեղ է բերում և իրականացնում յերեխաների կոմունիստական խմբերի և դպրոցի աշխատակցութեան կազմակերպված ձեվերին անցնելու անհրաժեշտութեանը:

Յերեխաների կոմունիստական խմբերի — կամ ինչպես նրանք Խորհրդային յերկրներում կոչվում են — պատկոմական խմբերի աշխատանքի գործնականը մեզ թույլ է տալիս ընդգծել և նշանակել պատկոմական խմբերի և դպրոցի աշխատակցութեան ուղիներն ու գծերը:

Պատկոմն յուր խմբի մեջ ստանում է հասարակական ներգործականութեան մի վորոշ քանակութեան: Այն գրությունների ընթացքում, վոր պատկոմներն ունենում են իրանց խմբերի մեջ, նրանք իմանում են բանվոր դասակարգի կյանքի և պայքարի մասին: Պրոլետարական տոների և հանդեսների սրբերին պատկոմը կայտառ և աշխույժ կերպով քայլում է յուր մեծ ընկերների հետ միասին՝ ցուցադրելով բանվոր դասակարգի միջազգային համերաշխութեանը: Նրա համար դա վոչ միայն տոնական մի ցուցադրութեան է, վոչ յուր առորյա աշխատանքների ընթացքում նա նամակագրութեան մեջ է մյուս յերկիրների յերեխաների կոմունիստական խմբերի հետ: Նա հանդեսակցութեաններ և ֆանդեր է կազմակերպում Գերմանիայի յերեխաների կոմունիստական խմբերի համար, նա ներգործական կերպով արձագանք է տալիս այն լողունքներին, վոր նա յուր ցուցանակներ և գրողակների վրա հանդես է բերում տոն սրբերին: Հոկտեմբերյան հեղափոխութեան տարեկից հանդեսներին աշխատավոր կանանց միջազգային տոներին պատկոմական խումբը հանդես է գալիս գործաբանում, դավոտում, այնտեղ է տանում նա յուր մատուց ուրախութեանը, այնտեղ է տանում նա յուր համեստ նվերները՝ պատկոմական խմբի կողմից աշխատանքի արդյունքը: Հնամաշ և հնակեն-

ցաղ կրօնական տոները պատկոմից մեծ յեռանդ և ներգործականութիւն են պահանջում. այս մասում նա կուլի յե մանում հին հասարակարգի բազմադարձան նախապաշարումները, ծանր ժառանգութեան հետ: Նա հակակրօնական հարցի նկատմամբ ներգործական պրոպագանդիստ է թե յուր տանը և թե դպրոցում:

Յեթե դպրոցը, վոր ազատագրված և կրօնի պարտադիր դաստիարակութիւնից, մինչև այժմ դեռ կարծում է, վոր կրօնը յուրաքանչյուր մարդու մասնավոր գործն է, պատկոմն, ընդհակառակը, դպրոց գալով բազմաթիվ հարցեր է առաջ բերում և պահանջում նրանց լուծումը, գիտական հիմքեր է վորոնում հակակրօնական տրամադրութիւն ստեղծելու համար. այդ յեղանակով նա ջարդ ու փշուր է անում չեզոքութեան վերջին ցնորքները, նա նստատու է ըմբռնելու, վոր նախապաշարմունքների դեմ չկուլի վոչ այլ ինչ է, յեթե վոչ այդ նախապաշարմունքների հետագա տարածման նպաստող մի դրութիւն:

Պատկոմը անձամբ մասնակցելով բանվոր դասակարգի ընդհանուր քաղաքական ձեռնարկութիւններին յուր հետ քաջում տանում է ամբողջ դպրոցը և բոլոր դպրոցականներին: Դպրոցում պատկոմի անելիքն այն է, վոր պետքի նա՛ հանդիսանալով հուզող և հեղափոխող մի թթխմոր, դպրոց մտցնի հեղափոխական տրամադրութիւն, դպրոցը մոտեցնի այժմեականութեան, յերեխաներին քաջի, տանի դեպի հանրապետութեան ընդհանուր քաղաքական կյանքը:

Պատկոմը սերտորեն կապված է գործարանի, կոմյերիտիութեան, կուսակցութեան հետ: Այնտեղից նա դըպրոց է բերում ժամանակակից մոմենտը հուզող նոր հարցերը, վորոնք կապված են կենցաղի, տնտեսութեան և վերջապես քաղաքական անցքերի հետ: Այդ հանգամանքը անհրաժեշտորեն ստիպում է դպրոցին, վորպետքի սազարգացողական-կրթական նյութ ընտրելիս ի նկատի ու-

նենա մոտավոր կենսական խնդիրները, ըստ հնարավորութեան պատասխանելով յերեխայի մեջբերած հարցերին:

Վերջապես պատկոմական խմբի միջոցով գործարանի, հասարակական կազմակերպութիւնների հետ յեղած կապը անսպառ մի ազդեցութեան դպրոցի հետադասական աշխատանքների համար: Այդպես ուրեմն պատկոմն էր ի դպրոցական քաղաքականութեան յերկրորդ խնդիրը հանդիսանում է դպրոցի մերձեցումը, աշակերտների կապի հաստատումը կոմյերիտիութեան, կուսակցութեան և վերջապես ամբողջ բանվոր դասակարգի կյանքի հետ: Յերեխաների կոմունիստական խմբերի դպրոցական քաղաքականութեան յերրորդ խնդիրն այն է, վորպետքի դպրոցի կյանքը, դպրոցական կուլեկտիվը հեղափոխել յուր մեջ առնի, սնվի այն հիմնական սկզբունքներով, վորոնց վրա կառուցվում է պատկոմական կազմակերպութիւնը: Աշակերտների ինքնագործունեութեան, ինքնավարութեան, ներգործականութեան սկզբունքներն են դրանք:

Այդ խնդիրը դպրոցի համար նորութիւն չէ, նա հայտարարված է հինգ տարի սրանից առաջ, բայց դրա իրագործումն ու գործնականը դեռ շատ հեռու յեն այն սկզբունքներից, վորոնք հիմք են կազմում Սորհրդային աշխատանքային դպրոցի: Յե՛վ իրոք, միթե շատ կան մեզ մոտ այնպիսի հաստատութիւններ, վորտեղ յերեխաները ներգործական կերպով և գիտակցաբար մասնակցեն իրանց դպրոցի շինարարութեան գործին: Աշխատանքային միասնական դպրոցի կանոնադրութիւնը 12 տարեկանից սկսած աշակերտներին իրավունք է տալիս վճռական ձայնով մասնակցել դպրոցական խորհրդին. սակայն ինչպես և իրագործվում կանոնադրութեան այդ կետը: Մեծ մասամբ դա կամ բոլորովին մոռացութեան է տրված կամ դարձել է մի սոսկ ձևականութիւն—աշակերտների ներկայացուցիչները ներկա յեն լինում նխտերին լոկ ձեզա-

կանորեն, ըստ վորում շատ հաճախ նրանք, նույնիսկ մանկավարժներն անգամ չեն հասկանում, թե ինչ նպատակ ունի խակապես այդ ծեսը: Բացառութիւնները մասին չենք խոսում, այդ բացառութիւնները հաստատում են լոկ այն պահանջի իրավացիութիւնն ու կենսունակութիւնը, վոր առաջ ե բերում կանոնադրութիւնը դպրոցի նկատմամբ: Յեթե մենք նայենք յերեխաների ինքնավարութեան որդանների աշխատանքներին (գործկոմներ, աշկոմներ, դասկոմներ), ապա կըտեսնենք, վոր դա մեծ մասամբ դարձել ե դպրոցի անելիքների և առաջադրած նպատակների մի փոքր մասի մեքենայական իրադրծումը լոկ, վորը ուսուցչին ազատում ե մի քանի անհաճո պարտականութիւններէ: Դասարանական հերթապահութիւն, վորը հաճախ կատարվում ե այբբենական կարգով և ընդհանուր ընդունված կարգապահութիւնը խանգարելու դեպքում վորոշ կարգապահական ներշնչում— ահա յերեխաների ինքնավարութեան որդանների ամբողջ ըրվանդակութիւնը: Աշակերտը վոչ մի կերպ չի մասնակցում դպրոցի կազմակերպչական կյանքին, և ավելի քիչ դպրոցի ուսումնական աշխատանքների կազմակերպութեան գործին: Նա գալիս ե դպրոց, մանում ե դասարան, վորտեղ նրան սպասում ե ուսուցիչը, վորը նրա ուշադրութեանն ե հանձնում գիտելիքների վորոշ քանակութիւն և նրան առաջարկված նյութի յերկու, յերեք կամ չորս ժամյա կրավորական ընդունումից հետո նա ուրախութեամբ դըպրոցից փախչում ե փողոց, վազում ե դեպի ակումբ, վորտեղ նա ապրում ե, վորտեղ նա ինքը հասարակական ինչ վոր հարաբերութիւններ ե ստեղծում, մասնակցում ե ինչ վոր խմբավորումների, նա այնտեղ ինքն ե յուր ժամանակը անորինում, ինքն ե յուր աշխատանքը կազմակերպում, ինքը յուր ազատ ժամանակի տերն ե: Այնտեղ նա կարող ե արտասանել «յես ինքս» բազմաբովանդակ խոսքը: Հիշեցեք, ընթերցող, ինչքան հաճախ եք կրկնել այդ խոսքը, յերբ յերեք չորս տարեկան եյիք: Մե-

դանից շատերն արդեն մոռացել են այդ խոսքը. հասակավորների հոգատար և ձանձրացնող խնամատարութիւնը շատ շուտ ե խեղդում մեր մեջ այդ ձգտումը դեպի անկախութիւն: Սեփական ջանքերով այս կամ այն արգելքներն հաղթահարելու ուրախութիւնը շատ սակավաթիվ յերեխաների ե բաժին ընկնում: Մեծամասնութիւնը մոտենալով դպրոցի շեմքին արդեն համակերպվում ե իր կրավորական դերին հասակավորների ներկայութեամբ և նրան մնում ե կյանքի լոկ մի փոքր անկյուն, վորտեղ նա ինքն ե կազմակերպում իր աշխատանքը, իր ազատ ժամանակը, իր փոխարարութիւնները: Պատկոմի համար այդպիսի անկյուն ե ահա նրա խումբը: Նա ինքն ե մտել խմբի մեջ, ինքն ե կամավոր կերպով դնացել այդ կազմակերպութեան մեջ. իրապես ընկերների հետ միասին նա ինքն ե այնտեղ կազմակերպում յուր աշխատանքը, յուր պարագմունքները, յուր հանգիստը: Նրա ավագ ընկերները, ավելի շատ բան գիտցող և ավելի փորձված պատկոմները նրան ոգնութեան են գալիս, ոգնում են նրան այն դեպքում, յերբ նա խնդրում ե սրանց:

Ինքնակազմակերպման, ինքնագործունեութեան ահա տարրը պատկոմը դպրոց ե տանում մտցնում, իսկ վորտեղ այդ տարրը կա, նա ավելի զարգացնում, ավելի ծավալում ու խորացնում ե ու այդպիսով հանդիսանում ե յերեխաների ներգործականութիւնը քաջալերող, հեղափոխական շունչը վառ պահող մի կայծ:

Կազմակերպչական այս ունակութիւնները, ինքնագործունեութեան այս ձգտումը պատկոմը յուր խմբից դպրոց ե մտցնում, բայց նրա դերը դպրոցում բոլորովին այն չե, վոր նա բոլոր՝ քիչ թե շատ ակտիվ ֆունկցիաներն յուր ձեռքը կենտրոնացնի, այլ ընդհակառակը, նա պետք ե վորքան կարելի յե մեծ քանակութեամբ յերեխաներ քաջի ու գրավի դեպի այդ աշխատանքները:

Վերջապես— վերջին ամենակարեւոր, լուրջ և ամենադժվար հարցը հետևյալ հարցն ե. ինչպես համաձայնեցնել

կրթական աշխատանքների մեթոդները, դպրոցի տված ուսումնական նյութը, ինչպես միություն հաստատել, միավորել դպրոցի և պատկանական խմբի ջանքերն աշակերտների աշխատանքային նախապատրաստությունը, նրանց աշխատանքային դաստիարակությունը իրականացնելու գործի մեջ:

Հասարակականության ներմուծումը դպրոցի մեջ, նրա մոտեցումը այժմեականության, դպրոցական կյանքի և աշխատանքի կազմակերպությունը ինքնագործունեություն հիմքերով — այս բոլորը հարկադրում է դպրոցին յերեխաների հետ ունեցած յուր գաստիարակչական աշխատանքի մեջ դիմել դեպի ակտիվ ուսումնասիրությունն ու հետադատությունը այն յերեխաների, վերանջը շրջապատում են յերեխաների կյանքը, վարակող գիրքը լսկ մի ոժանդակ միջոց է հանդիսանում, վոր մի վորոշ բանալի յե ապիս աշակերտներին ուսումնասիրելիք յերևույթներն ավելի ուղիղ ըմբռնելու և ավելի ուղիղ գնահատելու: ԳՄԿ-ի ծրագրները, վորոնք յերեխաների աշխատանքը հիմնում են հասարակությունից աշխատանքային գործունեությունն ուսումնասիրելու վրա, այդպիսի համաձայնեցման հնարավորություն են ապիս: Բայց ինչպես վոր ԳՄԿ-ի ծրագրները հաջողությունից կարող են իրագործվել միմիայն այն դեպքում, յերբ դասատուն մարքսիստորեն դրադետ է, ճիշտ այդպես էլ դպրոցական աշխատանքի մեթոդների համաձայնեցումը պատկանական խմբի աշխատանքի հետ բարեհաջող կերպով կարող է լուծվել միմիայն այդ դեպքում, վորովհետև այստեղ խոսքը վոչ միայն աշխատանքի մեթոդների համաձայնեցման մասին է, այլ և բազմաթիվ փաստերի և յերեխաների լուսաբանություն, նրանց գնահատման, այն տեղի վորոշման մասին, վոր ավյալ յերեխաները գրավում է հասարակական զարգացման բազմաթիվ այլ փաստերի խմբավորման մեջ:

Շատ բնական է, վոր միմիայն մարքսիստորեն զարգացած, մարքսիստորեն մտածող դասատուն կարող կլինի-

նի լուսաբանություն և գնահատություն ապլ այս կամ այն յերեխաներին, նման այն վերլուծությունն ու գնահատությունը, վոր պատկանում է յուր խմբի մեջ: Այդպես ուրեմն, դպրոցի և պատկանական խմբի կրթական-զարգացողական աշխատանքի համաձայնեցումը կարող է իրագործվել:

Պատկանական խմբի աշխատանքի մեջ աշխատանքի մի աեսակ ևս կա, վորի վրա հարկավոր է կանգ առնել. դա պատկանների կատարած այսպես կոչված արտածրագրային աշխատանքն է, վորի պատճառը հաճախ կուսակցական որգաններին հանդես բերած ազիտատորական գործունեությունն է: Վորպես որինակ վերցնենք 1923 թվականը, յերբ պատկանները յեռանդուն կերպով զբաղվեցին Գերմանական դեպքերով, սկսեցին յերեխաների կոմմունիստական խմբերի ֆոնդի համար աշխատել, իրանց ակումբներում կազմակերպում էին «Գերմանական խմբակներ» և այլն: Մի քանի պատկանական խմբեր աշխատեցին անմիջապես դպրոց մտցնել այդ աշխատանքը և ստիպել դպրոցին զբաղվել գերմանական դեպքերով: Այդպիսի մերձեցումն այժմ և՛ վնասակար կլինի և՛ ավելորդ: Այդպիսի պահանջները, յանգարելով և բեկանելով դպրոցի ծրագրային կանոնավոր աշխատանքը, գծվար թե յերեխաներին բավականաչափ գիտություն տան ավյալ հասարակական յերեխաների մասին, լսկ դպրոցի ծրագրի կողմից չընախատեսած այդպիսի ավելի փոքր կարգի յերեխաների հսկայական բազմությունը վերջնականապես կլիտրծաներ, կավերեր դպրոցի ծրագրային կանոնավոր աշխատանքը:

Յեթե դպրոցի ուսումնական աշխատանքի մեջ նկատում են արդեն դպրոցի և պատկանական խմբի համաձայնեցրած աշխատանքների վորոշ նշաններ, ապա նույն բանը յերբեք չի կազելի ասել յերեխաների աշխատանքային գործունեություն և աշխատանքային դաստիարակություն մասին: Յեվ յերավի, միթե գոյություն ունի մեզ մոտ աշխատանքային դաստիարակություն մեթոդիկա: Իհարկե վոչ. ճշմար-

ընտ ե, դրա պատճառները շատ են, անկախ ու առարկայական պատճառներ. մեր ուսուցիչների ստացած դաստիարակութունը, վոր միայն միտքն է զինել, միայն բանականությանը սնունդ տվել, դպրոցի առանձնացումը կյանքից, աշխատավոր մասսաների գործունեությունը և այլն: Այդ փաստի մեջ ուսուցչի և դպրոցի մեղքը չէ, վոր հանգես է գալիս, այլ դժբախտությունը: Բայց համեսայն դեպս, փաստը մնում է փաստ: Արտագրական աշխատանքային գրագիտության հիմնական տարրերի այս կամ այն չափի ավանդումը յերեխաներին, դպրոցի ներսքաշումը գործարանական արտագրական և գյուղատնտեսական աշխատանքի շրջանը—այդ հարցերն անա մինչև այժմ իրանց լուծումը չեն ստացել:

Յեվ գյուղատնտեսական, արդյունաբերական թեքումների մասին յեղած խոսակցությունները առայժմս մնում են դեռ լոկ խոսակցություններ: Խոշոր գործարանային կենտրոնի մասսայական սովորական դպրոցը շատ քիչ բանով է տարբերվում գյուղական դպրոցից: Յերեխայի՝ դպրոցում ունեցած այսպես կոչված «աշխատանքային պրոցեսները» շատ անորոշ բովանդակություն ունեն. շատ անգամ դա լոկ իրանց յերեխաներին պիտանի առարկաների արտագրությամբ է վերջանում, հաճախ իրական շոշափելի իլլյուստրատիվ նկարչություն է, կադապորումն և այլն. ուստի և աշխատանքային դաստիարակության աշխատանքների մեթոդ և այդ աշխատանքների կոնկրետ բովանդակություն մենք չունենք: Իսկ հարցը սուր է և թախանձորեն յուր պատասխանն է պահանջում:

Յեվ պատկոմներն, սուանց սպասելու այդ հարցի մեթոդաբանական մշակմանը, աշխատում են գործնականորեն լուծել դա: Կոմյերիտը ստեղծեց գործարանային աշակերտության դպրոցը, պատկոմը մտածում է ստեղծել մինչգործարանային աշխատանքի դպրոցը: Անկասկած է, վոր մինչգործարանային աշխատանքի դպրոցը վոչ այլ

ինչ է, յեթե վոչ իսկական աշխատանքային դպրոց, գլխավում է խոշոր գործարանային արտագրության կենտրոնում, նույնպես անկասկած է, վոր այս ախպի դպրոցի վորոնումների և ձևակերպության ընթացքում պատկոմները կըհանդիպեն Լուսժողկոմի որդանների հետ և մի ընդհանուր լեզու կըգտնեն: Առ այժմս պատկոմներն ևս այդ աշխատանքը վորձի յեղանակով են կատարում: Նրանք իրանց անդամների աշխատանքային դաստիարակության մեթոդներ են վորոնում:

Իսկ պատկոմական խմբերի մասսայական աշխատանքներն այս շրջանում արտահայտվում են իրանց արհեստանոցներում և ակումբներում ստուգիաներ կազմակերպելու մեջ (կադապորում, նկարչություն և այլն): Սակայն ընթերցողը կարող է ասել, չէ վոր այդպիսի աշխատանքներ կատարվում են և մյուս դպրոցներում. յերգեցողության և նկարչության, գեղարվեստական ձեռագործի, ձեռարվեստի և այլ տեսակ ստուգիաներ գոյություն ունեն մի քանի դպրոցների մեջ, դպրոցներից մի քանիսն ունեն նաև արհեստանոցներ: Այդիսկ պատճառով ավելի ևս անհրաժեշտ է դառնում դպրոցի և պատկոմական խմբի այդորինակ աշխատանքների համաձայնեցումը: Այդ աշխատանքի կազմակերպության մեջ պատկոմական խումբըն ինչպիսի առավելություններ ունի: Յեթե աշխատանքային դաստիարակության մեթոդների բացակայությունը կասեցնում է հարցի լուծումը, ապա ինչպիսի պիտի լինի արտագրական գիտելիքների և ունակությունների այն գումարը, վոր յերեխան պիտի ստանա մինչև յուր 14 տարեկան հասակը: Ճշմարիտ է, մենք մինչև այժմ աշխատանքային գրագիտության այբուբեն չունենք, բայց այնուամենայնիվ պատկոմական խմբի գործնականը աշխատում է կազմակերպել յերեխաների աշխատանքային ներգործականությունը, զիտական և վորձնական հաստատությունների համար հերթական դարձնելով այդ հարցերը: Անկասկած է, վոր հարկավոր է առողջ և ուղիղ համարել

սատուղիաների և արհեստանոցների հասարակական անելիք-
ները վորոշումը:

Պրակտաների, նկարների պատրաստումը, շինություն-
ների, գործարանների, շոգենավերի, այրուղիների կա-
զապարումը և այլ արհեստանոցային աշխատանքները նը-
պատակ ունեն կամ հոգալու պատկոմական խմբի կարիք-
ները կամ զարգարանքի առարկաներ պատրաստել—նվեր-
ներ բանվորական ակումբին կամ թե այդ առարկաների
ոռայիղացիան Գերմանիայի յերեխաների կոմիտեիստա-
կան խմբերի ոգտին: Այդ պարապմունքը մի սոսկ ըզ-
բաղմունք չե, այլ հասարակական մի քանի թանկագին
առարկաների արտադրություն յերեխաների միջոցով: Ան-
կասկած է, վոր յերեխաների աշխատանքի պրոգուկտի
հասարակական նշանակության հանգամանքն ուժեղ կեր-
պով առաջ է քաշում ու քաջալերում յերեխաների գոր-
ծունեությունը: Յես այստեղ կանգ չեմ առնի պատկոմ-
ների գործունեությունը քաջալերելու մանկավարժական
կողմի վրա՝ փորձնական խնդիրներ տալու միջոցով, վո-
րովհետև ներկա հոգվածի նպատակը պատկոմների և դըպ-
րոցի փոխհարաբերության վերլուծությունն է լոկ, բայց
դրա մասին մենք յուր տեղում կըխոսենք:

Յերեխաների աշխատանքային գործունեության կազ-
մակերպության մեջ մյուս կարևոր և վերին ստաիճանի
զնահատելի կողմն այն է, վոր յերեխաներին գրավեն ա-
կումբի պատերից դուրս կատարելու զանազան աշխա-
տանքներ բանվորական ու գյուղացիական պատգամավոր-
ների խորհրդի տեղական բաժանմունքի տված ծրագրի
համաձայն, գրանով իհարկն յերեխաներին գրաված կըլինեն
գեպի խորհրդային շինարարության շրջանը՝ յերեխաների
ուժերին մատչելի ձեվերով ու տեսակներով: Այս կողմից
պատկոմներն էլ շատ քիչ բան են արել, բայց անել կա-
րելի յե և անել պետք է: Վերցնենք որինակ. գարնան
սկզբին, յուրաքանչյուր քաղաք՝ մեծ թե փոքր, յուր մի-
ջոցների վորոշ մասը բաց է թողնում ծաղիկներ տնկելու

և ծաղկարաններ շինելու պարկերում, հուշարձանների
շուրջը, հեղափոխության համար ընկած մարտիկների շի-
րիմների չորս բուրբ: Այդ գործով մեծերն են զբաղվում.
բայց միթե այդ աշխատանքը չե կարելի հանձնարարել
պատկոմներին, և սրանց միջոցով նաև դպրոցներին, ըստ
վորում մի ուսուցչի զեկավարությունը հնարավորություն
կըտար կատարված աշխատանքը դաստիարակչական - զար-
գացողական նպատակներով ոգտագործել—իրար հետ կա-
պակցել: Սա որինակներից մեկն է, իսկ այդպիսի որի-
նակները բազմաթիվ են: Հարկավոր է միայն ուշագիծ
կերպով վորոնել և առողջապահական, շինարարական և
այլ բնույթ ունեցող մի ամբողջ շարք գործերի մեջ գըս-
նել յերեխաներին մատչելի համապատասխան աշխատանք-
ներ: Դա հնարավորություն է տալիս, վոր դպրոցը յերեխա-
ներին մասնակից անի շինարարությանը, դուրս բերի
նրանց դպրոցական շենքերի սեղմված պատերի շրջանակից:

Մնում է պատկոմական աշխատանքների մի տեսակն
ևս, վորին նույնպես մասնակից կարելի յե անել դպրո-
ցը: Դա, յեթե կարելի յե այդպես անվանել, պատկոմ-
ների հասարակական աշխատանքն է: Սոսքն այստեղ պատ-
կոմների այն աշխատանքի մասին է, վոր նոքա գործ են
գնում անխնամ յերեխաների նկատմամբ բառիս նեղ և
լայն իմաստով, այդ յերեխաների կյանքի պայմանները
քննելու, նրանց անխնամության պատճառներն իմանա-
լու և այդ անխնամությանը այս կամ այն չափով վերջ
տալու, ուսումնասիրելու և պաշտպանելու այն յերեխա-
ների շահերը, վորոնք իրանց վաստակով են ապրում, վո-
րոնք աշխատում են ուրիշների մոտ վորպես փոքրիկներ,
վորպես տնպահներ և մանկապահներ: Ռայոնի, իսկ հետո
նաև դպրոցի պատկոմական ակումբը յուր շրջանում պի-
տի լինի այն յերեխաների նկատմամբ ոժանդակության,
ուշագրության և խնամքի մի կայան, վորոնք պայմաննե-
րի բերմունքով վտարվել են իրանց սկզբնական սոցիա-
լական ըջիջից, վորը մինչև այսոր յերեխայի համար դեռ

ընտանիքն և հանդիսանում: Պատկոմական ակումբը, իսկ
 դրա հետևից նաև դպրոցը, վորոնք կըկարողանան տալ
 այդպիսի յերեխաներին իրանց նեղ, ընտանեկան ավեր-
 ված բջիջի փոխարեն ամուր, հաստատուն ընկերական
 կոլեկտիվի ընտանիք, դրանով իրագործած կըլինեն սո-
 ցիալական դաստիարակչության իսկական նպատակները:



ՊԱՏԿՈՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ
 ԳՊՐՈՑՈՒՄ

Յերեխաների կոմունիստական շարժման հիմնական
 բջիջները դեռահաս պատկոմների խմբերն են: Համա-
 ձայն յերեխաների կոմունիստական շարժման հիմնական
 խնդիրների և նպատակների, մի շարժում, վորը գերազան-
 ցորեն քաղաքական բնույթ և կրում և պրոլետար յերե-
 խային կապում և յուր դասակարգի հետ, պատկոմական
 խմբերը կազմակերպվում են դպրոցի մեջ, գավոզում,
 գործարանին կից, ձեռնարկության ռալյոնում: Այնտեղ,
 բանվորական կենցաղի մթնոլորտում, բանվորի աշխատան-
 քային և հասարակական կյանքի մթնոլորտում պատկոմ-
 ները ձեվավորում են իրանց գիտակցությունը, կազմա-
 կերպում և կոմունիստական դաստիարակչության ուղին
 ձգում պրոլետար յերեխաների կյանքն ու կենցաղը:

Յերեխաների կոմունիստական շարժման հիմնական
 կորիզը բանվորների յերեխաներն են և լուր հետագա ծա-
 վարման պրոցեսսի մեջ հնարավոր և դառնում պատկոմ-
 ների կազմակերպության մեջ մտցնել ազգաբնակչության
 միջանկյալ խմբավորումների և խավերի յերեխաներին:
 Գյուղական յերեխաների շրջանում պատկոմների ունենա-
 լիք աշխատանքի հարցը առանձին տեղ և բռնում: Գյու-
 ղում պատկոմների աշխատանքների կարիքն ու պահանջը
 զգում են յերեխաները շարժումը ղեկավարող օրգանները
 հանձին կոմյերիտիության, և հավանորեն մտտիկ ժամա-
 նակներում այդ հարցը յուր գործնական լուծման մակար-
 դակի վրա կըդրվի: Պատկոմների խմբի կազմակերպչական

հորինվածքը հետևյալն է. խումբը, յուր մեջ միացնելով 30—35 հոգի—բաժանվում է ավելի փոքր բջիջներին, ուղակներին, վորոնցից ամեն մեկը բաղկանում է 6—10 մարդկանցից. յուրաքանչյուր ողակի գլուխ կանգնած է ընտրովի սղակապետը, իսկ խմբի գլխավորը խմբապետն է: Խմբի ընդհանուր հավաքույթը, ուրիշ խոսքով խմբի բոլոր պատկոմների ընդհանուր ժողովը ունի յուր ընտրովի որգանը—ողակապետների խորհուրդը: Մեծ մասամբ խմբի ղեկավարը լինում է մի քանի սարով մեծ (15—17 տարեկան) կոմյերիտը: Նա հաստատվում է դեռահաս պատկոմների ռայոնական բյուրոյից և յուր աշխատանքի համար պատասխանատու յն կոմյերիտմիության տեղական կոմիտեայի առաջ, վորը նրան այդ աշխատանքն էր տվել: Յերեխաների կոմմունիստական բովանդակ շարժման ղեկավարը յերիտասարգությունն է հանձին կոմմունիստական յերիտասարգության միության և կոմյերիտմիության տեղական կոմիտեաները կազմակերպում են կամ իրանց միջից ընտրում են դեռահաս պատկոմների մի բյուրո, վորը տվյալ ռայոնի պատկոմական աշխատանքների փաստական ղեկավարության որգանն է:

Այսպիսի տեսք ունի անո պատկոմական շարժման կազմակերպչական հորինվածքը: Խմբի ըստ ձևանարկությունների կազմակերպության սկզբունքը այն հետևանքն է ունենում, վոր միևնույն դպրոցում կարող են այնպիսի պատկոմներ ստվորել, վորոնք զանազան խմբերի մեջ են մտնում և դպրոցում նրանք կարող են տվյալ դպրոցական կոլեկտիվի առանձին, անջատ անդամները լինել: Այս կամ այն դիժը անցկացնելու համար—իսկ մենք տեսանք, վոր պատկոմները դպրոցական քաղաքականության մեջ վորոշ գիծ ունեն, վորոշ նպատակների յին հետաանդում—անհրաժեշտ է տվյալ դպրոցում սովորող պատկոմներին միացնել մի բջիջի մեջ, դպրոցում նրանց կատարած աշխատանքին կայուն, կազմակերպչական ձև տալ: Տվյալ դպրոցի մեջ պատկոմների այդպիսի միավո-

րությունը դեռահաս պատկոմների ֆորպոստն է: Ֆորպոստը, միացնելով պատկոմներին, պետք է մյուս դպրոցականների համար կազմակերպվածության, միաձուլության, հասարակական գիտակցության որինակ լինի: Ֆորպոստը—դա միացումն է ամենից ավելի ակտիվ յերեխաների, վորոնք իրանց որինակով գրավում, իրանց հետևից քաշ են տալիս աշակերտների բազմությունը: Ֆորպոստը—դա դպրոցի հուզող, զարթեցնող տարրն է, վոր դպրոցը քաշում մտցնում է հասարակական աշխատանքի մեջ, վոր յերեխաների բազմության մեջ պահում ու քաշալերում է ներգործականության, ինքնագործունեության սկզբունքները, վոր թարմացնում է ինքնավարության որգանների աշխատանքը: Ֆորպոստը—դա հենց յերեխաների կոմմունիստական շարժման քաղաքականության միջնորդ հաղորդիչն է դպրոցի մեջ: Այս ամբողջ աշխատանքը սակայն, վոր զրվում է ֆորպոստի վրա, յերբեք չի մեծացնում ֆորպոստը կազմող պատկոմների իրավունքները՝ համեմատած մյուս դպրոցականների հետ: Չավազանց վրտանդավոր սխալ կրկներ, յեթե վոր պատկոմները իրանց ձեռքն առնելին ամբողջ իշխանությունը և յերեխաների մնացած բազմության դիմաց իրանց համար հրամանատարների և ղեկավարների վիճակ ստեղծելին: Դպրոցի մեջ պատկոմական ժողովուրդի անելիք պետք է լինի վոչ քե իրան հակադրել յերեխաների բազմությանը, այլ յերեխաների սակողջ մասսան կոմմունիստական ազդեցության քաշանին յեկարակել, դպրոցի մեջ կոմմունիստական դասիարակչության սկզբունքները արմատացնել:

Դպրոցում պատկոմների հաջողակ աշխատանքի գրավականը վոչ թե այս կամ այն իրավական արտոնություններն են, այլ բարոյական հեղինակությունը, այն փաստը, վոր ֆորպոստը յերեխաների կողմից ընդունվի և ճանաչվի վորպես առաջավոր խմբակ, Դպրոցի ֆորպոստի մեջ մանող պատկոմները ընկերական միությունը, նոցա փոխադարձ կապը նույնպես մեծապես կընպաստի նրանց

աշխատանքի հաջողութեանը: Այդ նպատակով դպրոցի գա-
նազան խմբերում սովորող պատկոմները ընտրում են ի-
րանց խմբական ներկայացուցիչը, վորոնց միավորումը
կազմում է ֆորպոստի խորհուրդը: Ֆորպոստի խորհրդի
գլուխը կանգնած է մի այնպիսի պատկոմական խմբի ղե-
կավարը, վորի յերեխաները սովորում են տվյալ դպրոցում:

Յեթե յերեխաների ինքնավարութեան ընտրովի ու-
ղանների մեջ պատկոմները վոչ մի արտոնութեան շու-
նեն և այդ որդանների մեջ մտնում են ընտրութեամբ յե-
րեխաների ընդհանուր ժողովում, նույն դպրոցում սովո-
րող մյուս յերեխաների հետ համահամակարգ, ապա դըպ-
րոցական խորհրդի մեջ ֆորպոստի ղեկավարը մտնում
է վորպես այդպիսին՝ վճռական ձայնի իրավունքով:
Այդպիսի կարգը պիտի ապահովի պատկոմական ֆորպոս-
տի և մանկավարժական կողմերի միահամուռ աշխա-
տանքը, նա փոխադարձ իրազեկութեան է ընձեռնում թե
պատկոմական ֆորպոստի և թե դպրոցական խորհրդի աշ-
խատանքների նկատմամբ: Փորպոստի ղեկավարի վրա
դպրոցում շատ մեծ է պատասխանատու աշխատանք է
ընկնում: Նա հանդիսանում է յերեխաների կոմիտենիս-
տական շարժման դպրոցական քաղաքականութեան պա-
տասխանատու ներկայացուցիչը, նրանից շատ մեծ տակտ
է պահանջվում, պահանջվում է յերեխաների վստահու-
թեանն ու մանկավարժների հեղինակութեանը նվաճելու
կարողութեան: Ահա պատճառը, թե ինչու համար ֆոր-
պոստի ղեկավարը հաստատվում է կոմյերիտմիութեան կից
դեռահաս պատկոմների ռայոնական կամ գավառական
բյուրոյի կողմից: Այդ է պատճառը, վոր դեռահաս պատ-
կոմների բյուրոն պարբերական խորհրդակցութեաններ է
հրավիրում պատկոմական խմբերի ղեկավարների մասնակ-
ցութեամբ, նրանց ցուցմունքներ է տալիս, լսում է նը-
րանց ղեկուցումներն ու հաշվետվութեանները:

Այս է ահա պատկոմների աշխատանքի կազմակերպ-
չական հորինվածքը դպրոցում:

Փոխհարաբերութեանների այլ ձևեր կան պատկոմնե-
րի և վորբանոցների (յերեխաների աների) մեջ: Վորբա-
նոցը հանդիսանում է դաստիարակութեան այն կազմա-
կերպչական ձևը, վորը մեր համոզմունքով անցիալ հասա-
րակական դաստիարակութեան սկզբունքներն իրագործե-
լու ամենահարմար յեղանակն է: Վորբանոցի յերեխանե-
րը դասակարգային տեսակետից ավելի միասնայ կազմու-
թեան ունեն, բան ընդհանուր քաղաքական դպրոցների
յերեխաները (բացառութեամբ զուտ գործարանային դըպ-
րոցների) և վերջապես յերեխաներն այստեղ վոչ միայն
սովորում են, այլ և ապրում են վորբանոցի մեջ: Վորբա-
նոցը — դա յերեխաների կենցաղն ու կյանքն է և այդ
կենցաղի պայմաններն այնպիսի յեն, վոր անհրաժեշտորեն
մղում են յերեխաներին իրանց կյանքը կոմունալ-կոլեկ-
տիվ յեղանակով կազմակերպելու: Յեղակետ ունենալով
այս ամենը, հարկավոր է խոստովանել, վոր այստեղ պատ-
կոմական խմբի և վորբանոցի աշխատանքների միացման,
միավորման ճանապարհն ավելի կարճ է, ավելի մոտ է
Ուստի և վորբանոցի մեջ պատկոմները ֆրակցիա կամ
ֆորպոս չեն կազմում, այլ կազմակերպում են պատկո-
մական խումբ, յեթե 30—50 հոգի լինեն, իսկ յեթե նո-
ցա թիվը պակաս լինի, նրանք կազմում են ողակ, վորը
մտնում է մոտակա պատկոմական խմբի կազմի մեջ:
Խմբի ղեկավարը մտնում է վորբանոցի խորհրդի մեջ վը-
ճռական ձայնի իրավունքով և պատկոմների աշխատանքը
համաձայնեցնում է մանկավարժների աշխատանքի հետ:
Յեթե դպրոցի մեջ պատկոմները զգալի փոքրամասնու-
թեան են կազմում, ինչպես գործնական կյանքը ցույց է
տալիս, դրա փոխարեն վորբանոցը այլ պատկեր է հան-
դես բերում. վորբանոցի կազմակերպած պատկոմական
խմբի մեջ յերեխաների մտտը մաստայական բնույթ է
կրում. վորբանոցի մեջ պատկոմները շատ շուտով են մե-
ծամասնութեան կազմում, ուստի և այնտեղ խոսքը վոչ
միայն պատկոմական խմբի և վորբանոցի աշխատանքների

համաձայնեցման, այլև վորբանոցի աշխատանքների մի քանի տեսակը ամբողջովին պատկոմական խմբին հանձնելու մասին է:

Վերցնենք թեկուզ ակումբի աշխատանքը: Վորբանոցի մեջ, վորտեղ յերեխաների մեծ մասը պատկոմներ են, աշխատանքի գործնական կազմը ուղղակի անհրաժեշտ է դարձնում ակումբի աշխատանքը պատկոմական խմբին հանձնելու: Դա նշանակում է, վոր ակումբային աշխատանքը ծրագրվում է առաջ է դնում պատկոմների ուսուցանական և գավառական բյուրոյի համաձայն. այդ աշխատանքը շատ անգամ տեղի յե ունենում վոչ միայն վորբանոցի մեջ, այլ պատկոմների ուսուցանական ակումբում կամ ընդհանրապես՝ ակումբը մնալով վորբանոցի պատերի մեջ, ծառայում է վոչ միայն սովյալ վորբանոցի յերեխաների, այլ և մերձակա պատկոմական խմբի յերեխաների համար:

Յերբ պատկոմական շարժումը ընդգրկում է հետզհետե բոլոր յերեխաներին, ինքնավարական աշխատանքը անխուսափելիորեն դառնում է պատկոմական կազմակերպության կազմակերպչական ձևերին, յերբ յերեխաների ընդհանուր ժողովը փաստորեն խմբի ընդհանուր հալաբույթին է հանդիսանում, յերեխաների գործկումը ձևափոխվում ու դառնում է ողակապեսների խորհուրդ: Մի խոսքով, վորբանոցը ամենահարմար կազմակերպչական ձևն է յուր ամբողջ աշխատանքը պատկոմական աշխատանքի սկզբունքների վրա կառուցանելու տեսակետից. այժմ այդպիսի սերտ միացման կամ ձուլման փաստեր արդեն գոյություն ունեն: Հարկավոր է այդ փաստերի վրա կանգ առնել և միայն տեղում ավելի մանրամասն քննություն առնել նրանց:

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԴԵՐԸ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՇԱՐՃՄԱՆ ՄԵՋ

Պատկոմական շարժման և դպրոցի փոխհարաբերությունները խնդիրը թերի կըլիներ, յեթե մենք լուծված անցնեյինք մանկավարժների դերի և տեղի մասին յերեխաների շարժման մեջ, մի խնդիր, վոր սուր կերպով հուզում է ուսուցչական մասսան. դա այժմեականությունն այրոյ հարցերից մեկն է, վոր այժմ կեթ պիտի լուծվի: Տարածայնությունների շատ են այս հարցի լուծման մերձեցումների մեջ:

Ամենից առաջ մի հետաքրքիր հարց, ո՞վ պիտի ղեկավարի յերեխաների շարժումը, յերիտասարդությունը՝ հանձին կոմյերիտմիություն, թե՞ հասակավորները, յեթե հասակավորները, ապա հանձին կուսակցական կազմակերպության, այսինքն կոմունիստական կուսակցության, թե՞ ղեկավարությունը կարող է յուր ձեռքն առնել նայն ուսուցչությունը, վորը մեծ մասով անկուսակցական է: Յերեխաների շարժման վերաբերյալ հարցերը քննության յենթարկող մամուլի մեջ ձայներ և կասկածներ են լրսվում, վոր ընդհանրապես յերեխաները, յերեխաների կազմակերպությունները կարող են ապրել և առաջ գալ առանց հասակավորների ղեկավարության, վոր նույնիսկ «յերեխաների կազմակերպության ազդանշանը հասակավորների կողմից պիտի արվի»: Յերբ յերեխաների կազմակերպությունն արդեն մեծ ծավալով ստեղծվել է, անհրաժեշտ է մեծերի անշեղ և անընդհատ ղեկավարությունը, այլապես կազմակերպությունը կըլուծվի*): իսկ դրա

*) Տես Արնաուտովի հոդվածը. Учитель и дет. движение. «Путь просвещ.» 11—12, 1923 թ. յերես 55.

կողքին մենք կարդում ենք Գերմանիայի յերեխաների կոմմունիստական խմբերի գործնական աշխատանքից բլդխող պատասխանը. «կազմակերպությունների մեջ ամբողջ աշխատանքը իրանք, յերեխաներն են տանում. նրանք աշխատում են նախագահության մեջ, լինում են զանձապահ և տանում են այլ պաշտոններ. խմբի մեջ ղեկավարի դերը համեմատաբար աննշան է. ղեկավարի այլ քաղաք մեկնելու հանգամանքը աշխատանքի խանգարման պատճառ լինել չի կարող. խումբը շարունակում է գոյություն ունենալ և աշխատել առանց նրան: Պատահել են դեպքեր, յերբ առանց հասակավորների մասնակցության, նոր խումբեր են կազմվել. յերեխաներն ուղղակի հայտնել են նոր կազմակերպության մասին կենտրոնական կոմիտետին»:^{*)}

«Պատանիությունը ամենավճռական ու արմատական կերպով խզել է յուր կապերը դեպի բարոյականությունն ու դպրոցը գոյություն ունեցող մեղձանական հարաբերությունների հետ, իսկ դրա հետ մեկտեղ նաև «յերեխաներին խնամելու» սովորությունների հետ: Նա հասկացավ պրոլետարական յերեխաների խմբերի մարտական բնույթը և ստեղծեց վոչ թե սոցիալիստական կամ կոմմունիստական կիրակնորյա դպրոցներ, այլ յերեխաների ակտիվ շարժում» - գրում է Գերնլեն:^{**)} Ահա այդ վիճաբանության յերկու ծայրերը: Վերտեղ է ճշմարտությունը. մենք կարծում ենք, վոր այս հարցում վճռական խոսքը պիտի տալ փորձին, աշխատանքի գործնական կողմին: Իսկ այդ փորձը ցույց է տալիս, վոր յերեխաների շարժման ղեկավարությունը իրանց՝ այդ շարժման մասնակցողների ձեռքում է. յերեխաներն ու յերիտասարդությունը, և այն ել պրոլետարական յերիտասարդությանը: Այն, յեթե ավելի ուշագիւր կերպով նայելու լինենք թեկուզ մեր՝ մինչ-

^{*)} Sba կանգե. Детское движение и детские группы в Германии.

^{**)} Եդ. Գերնլե. «Работа в коммунистических детских группах».

հեղափոխական Ռուսաստանի յերեխաների կյանքին, այնտեղ ևս կրկարողանանք նկատել յերեխաների այնպիսի կազմակերպություններ, վորոնք առաջ են յեկել առանց մեծերի, հասակավորների մասնակցության և նախաձեռնության, այլ հաճախ հակառակ սրանց. և այդ կազմակերպությունները իրոք յերեխաների իսկական կազմակերպություններ են: Սուքն այստեղ յերեխաների հրապարակների ու ակումբների մասին չե, վորոնց մասին Արնստուտովը խոսում է յուր հոդվածի մեջ. վորովհետև ճւմ է հարկավոր ապացուցանել, վոր այդ հրապարակներն ու կուռները մեծերի կազմակերպություններ են յեղել միշտ փոքրերի համար. և հենց դրա համար, վորովհետև «մեծերն եյին ազդանշանը տալիս միշտ», այդ կազմակերպությունները յերբեք չեյին դառնում իսկական յերեխաների կազմակերպություններ: Սուքը այն խմբերի, այն «շայկա» ների մասին է, վորոնք առաջ եյին գալիս մայրաքաղաքի հսկայական շենքերի հետին բակերում, վորտեղ տպրում եյին պրոլետարական յերեխաները, ինչպես և մեր գիմնադղիաների և սեմինարիաների դասարաններում վերջին նստարանների վրա, վորտեղ աշակերտները միանում եյին ընդդեմ մեծերի, վորպես ուսուցման և «դաստիարակության» տիրող սխտեմը կրողների: Շատ հասկանալի պատճառներով այդ խմբերը չեյին կարող յերեխաների շարժում ստեղծել տիրող վոստիկանական սեփմի որերին, բայց նրանք ընկերական համերաշխության միակ և բավականին հաստատուն դրսւրոցն եյին:

Այդպես ուրեմն, յերիտասարդությունը յուր ձեռքն է վերցրել յերեխաների շարժման ղեկավարությունը, տանում է այդ գործը և պեսք է ասնի: Յերիտասարդությունը պիտե ավելի սերտորեն, ավելի անկեղծորեն մոտենալ յերեխաներին: Յերեխաները իրանց յերիտասարդ ընկերների ներկայությամբ իրանց ավելի ազատ են զգում, ավելի պայծառ և ավելի լիակատար կերպով են արտահայտում իրանց ներգործականությունը, անմիջականու-


թյունն ու ազատութիւնը, հատկութիւններ, վոր մեծերի շրջանում յերեխաները մեծ դժվարութեամբ են ձեռք բերում. յերեխաների կոմմունիստական խմբի՝ պատկոմական խմբի ամենապայծառ հատկութիւններն են դրանք: Կոմմունիստական յերիտասարդութիւնը մյուսներից առաջ արձագանք տվեց յերեխաներին կազմակերպելու հասունացած կարիքին. առաջնութեան իրավունքը նրան է պատկանում: Յերեխաների շարժումը մի առանձնահատկութիւնն է ունի, վորը անհրաժեշտորեն պրոլետարական յերիտասարդութեան ղեկավարութիւնն է պահանջում. յերեխաների կոմմունիստական շարժումը դասակարգային, քաղաքական մի շարժում է, նա յուր անդամներին դաստիարակում է վոչ թե կոմմունիստական բարոյականութիւնը դասավանդելով, այլ յերեխաներին ներմուծելով բանվոր դասակարգի կյանքի, կովի և աշխատանքի մեջ: Այդ ներմուծումը, այդ կապը կարող են յուրացնել շարժման ղեկավարներէջ նրանք, ովքեր իրանք են դուրս յեկել բանվորական դասակարգի խորքերէջ, ովքեր զիտեն նրա կյանքն ու կենցաղը, նրա կարիքները, ովքեր նրա հետ հազարավոր կապերով կապված են, կապեր, վորոնք աչքի համար անտեսանելի յեն, սակայն վորոնք ճշտորեն հաղորդում են բանվորական դասակարգի զարկերակի բարակութիւնները:

Այս բոլորը մեզ համոզում է, վոր անհրաժեշտ է յերեխաների կոմմունիստական շարժման անմիջական ղեկավարութիւնը թողնել կոմմունիստական յերիտասարդութեան Միութեան ձեռքին: Այդ հանգամանքը բացասում է արդյոք մեծերի, հասակավորների աշխատակցութիւնը կամ մասնակցութիւնը այդ աշխատանքի մեջ: Յերեք, Հասակավոր կուսակցական ընկերները, վորոնք քաղաքական կովի, քաղաքական աշխատանքի մեծ փորձ ունեն, միշտ յերիտասարդութեան համար զիտակ և հեղինակավոր խորհրդատուներ կըմնան: Այդ գործակցութեան հաջողութեան գաղտնիքը նրա մեջ է լոկ, վոր նրանք, յերիտա-

սարդութեան առաջ բաց անկող իրանց կենսական, քաղաքական և մանկավարժական փորձի գանձերը, չհագնեն այն անխալական քրմապետի դողան, վորը բռնել է յուր ձեռքում ճշմարտութիւնն իմանալու բանալին, չառն յերիտասարդութեանը պատրաստի, անվիճելի ոեցեպտներ, այլ ոգնեն այն փորձի ձեւավորմանն ու ըմբռնմանը, վոր յերիտասարդութիւնն ինքն է հետզհետե ձեռք բերում կովի, աշխատանքների վորոնումների պրոցեսում: Սոցիալական դաստիարակութեան և կուսակցութեան որդանների աշխատակցութիւնը կոմիւնիստական կոմիտեաների հետ — յերեխաների կոմմունիստական շարժման աշխատանքի մշտական ուղեկիցն է:

Այդ այդպես. իսկ ուսուցչութեան լայն մասաները կարող են արդյոք տեղ ունենալ յերեխաների շարժման մեջ: Այն ուսանողները, վորոնք կըհրաժարվեն այն մաքից, վոր իրանք յերեխաների կյանքի, աշխատանքի և շահերի միակ կազմակերպիչներն ու ղեկավարներն են, արագ և հեշտ կերպով ընդհանուր լեզու կըգտնեն պատկոմների հետ: Ուսուցիչներից նրանք, վորոնք չեն մոռանա, վոր պատկոմական խմբի մեջ գլխավոր անձը վոչ թե ղեկավարն է, այլ յերեխան, պրոլետարական յերեխան, նրանք, ովքեր զիտեն լսել և կատարել յերեխայի աճող պահանջներն ու կարիքները, այդպիսիները կըկարողանան դրանց պատասխանել: Ուսուցիչներից նրանք, վորոնց համար պրոլետարիատի կովիլը հարսդատ մի դործ է, վորոնք վոչ միայն սովորեցնում են, թե ինչպես պետք է մղել այդ կովիլը, այլ իրանք ել լարված ու կրակոտ նետվում են կովի մեջ, բանվոր դասակարգի հետ ճանապարհ են հարթում դեպի կոմմունիստական նոր հասարակութիւնը — այդպիսիները յերեխաների կոմմունիստական շարժման մեջ տեղ կըգրտեն: Տնդ չունեն այդտեղ միայն նրանք, ովքեր մինչև այժմ կրավորական զիտող են մնացել իրանց աչքերի առաջ ծավալվող մեծադոյն պատմական ղեպքերի հանդեպ, նրանք, ովքեր «Նեպ»-ի պայմաններում նորից աշխատում

են մյուս ասիլը դուրս գալ, մանր բուրժուազիայի ասիլը, ով-
քեր ընկած են այն ցնորական ճահճային կրակների հե-
տևից, վորոնք առկայծում են տեղ տեղ մեր Սորհրդային
հասարակականութեան ֆոնի վրա—այդպիսիներէ համար
յերեխաների կոմունիստական շարժման մեջ տեղ չըկա
և չի լինի:



ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

- № 1. Դպրոցը և կամուսնիզմը
№ 2. Ազգային հարցը և կամուսնիզմը
№ 3. Կրոնը և կամուսնիզմը
№ 4. Պրոլետարական դատարանը
№ 5. Բնագիտությունը և աշխատանքի դպրոցում
№ 6. «Նվեր պատանիներին» (Հոկտ. Հեղ. աթիվի)
№ 7. Աշխատանքի մեծ տանը (Մայիսի 1)
№ 8. Հայոց լեզվի ծրագիրը
№ 9. Հրահանգ ուսուցիչներին և քաղաքացու գիտելիք-
ներին ծրագիրը
№ 10. «Մ զբեր և կամուսնիտաները»
№ 11. Պ. Բլանսկի, «Վերն և աշխատանքի դպրոցը» պր. I.
№ 12. » «Աշխատանքի դպրոցի մանկապար-
տակը» պրակ. II
№ 13. » «Աշխատանքի դպրոց I ստաիճանի».
պրակ. III.
№ 14. «Մեր մեծ տանը» (Հոկտ. Հեղ. աթիվի)
№ 15. Գործնական ման ազարժուելյուն
№ 16. Աշխատանքի տանը
№ 17. Ուսուցչություն կոլեկտիվ աշխատանքը
№ 18. Պատկանները և դպրոցը
№ 19. Բնագիտարությունը դյուրական դպրոցում



